# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 19 » Նոյեմբերի 2014 Թ. N 43

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *Հաստատել օրակարգը՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

Վ.Հակոբյան ---------------------------- / ստ./
Ռ.Մովսիսյան ---------------------------- / ստ./
Թ.Սողոմոնյան ---------------------------- / ստ./
Ռ.Խլղաթյան ---------------------------- / ստ./
Գ. Համբարձումյան /ստ./
Հ.Գալստյան ---------------------------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

*2014թվականի*
*Նոյեմբերի « 19»*
*գ. Մրգաշատ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ
Նոյեմբերի 19-ի N 10 ՆԻՍՏԻ
N 43 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական

համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 19 ի թիվ 10 նիստի

1. Օրակարգի հաստատում:
2. Համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 17-ի «2014 թվականի համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 41 -ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Դրամական օգնության մասին:
4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին
5. Համայնքի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2015 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Մրգաշատ համայնքի 2015 թվականի բյուջեի նախագծի քննարկման մասին.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 19» Նոյեմբերի 2014թ. N 44-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի « 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 17-ի «2014 թվականի Համայնքի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8 նիստի N 41-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

*1) Բյուջեի եկամտային մասում՝*

*ա) Պետության կողմից տրվող սուբվենցիայի 1553.9 թիվը փոխարինել 1807.1 հազ դրամ թվով:*

*բ) Հողի հարկի 21288.9 հազ դրամ թիվը փոխարինել 18284.9 հազ դրամ թվով:*

*2) Բյուջեի ծախսային մասում՝*

ա/ 01 բաժնի 01 խմբի 1դասի 4111 հոդվածի « 40728.0 » թիվը փոխարինել « 40981.2» թվով.

բ/ 10 բաժնի 07 խմբի 1դասի 4729 հոդվածի « 6000.0 » թիվը փոխարինել « 8000.0 » թվով

գ/ 11 բաժնի 01 խմբի 2դասի 4891 հոդվածի « 5004.0» թիվը փոխարինել « 0 » թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

Վ.Հակոբյան ---------------------- /ստ./

Ռ.Մովսիսյան ---------------------- /ստ./

Թ.Սողոմոնյան ---------------------- /ստ./

Ռ.Խլղաթյան ---------------------- /ստ./

Գ.Համբարձումյան ---------------------- /ստ./

Հ.Գալստյան ---------------------- /ստ./

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*2014 թվականի*
*Նոյեմբերի « 19 »*
*գ. Մրգաշատ*

*Կ. Տ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 19 » Նոյեմբեր 2014թ. N 45

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տրամադրել դրամական օգնություն.
   1) Սոցիալապես անապահով ընտանիքներին 1170000 /մեկ միլիոն հարյուր յոթանասուն հազար)ՀՀ դրամ համաձայն N1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից.

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

Վ.Հակոբյան ------------------------ /ստ./
Ռ.Մովսիսյան ------------------------ /ստ./
Թ.Սողոմոնյան ------------------------ /ստ./
Ռ.Խլղաթյան ------------------------ /ստ./
Հ.Գալստյան ------------------------ /ստ./
Գ. Համբարձումյան ------------------------ /ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

2014 թվականի Նոյեմբեր « 19 »
Կ. Տ.

գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ի N 10 ՆԻՍՏԻ
N 45 ՈՐՈՇՄԱՆ

# Ց ՈՒ Ց Ա Կ

Սոցիալապես անապահով ընտանիքների

| | | |
|---|---|---|
| 1. | Արոյան Վաչագան | 60000 |
| 2. | Մալխասյան Լեյլի | 60000 |
| 3. | Դանիելյան Անահիտ | 100000 |
| 4. | Մկրտչյան Մհեր | 100000 |
| 5. | Կարապետյան Սամվել | 100000 |
| 6. | Թովմասյան Կարեն | 150000 |
| 7. | Արշակյան Լարիսա | 200000 |
| 8. | Հակոբյան Արթուր | 200000 |
| 9. | Նիկոլյան Արամ | 200000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 19» Նոյեմբերի 2014թ. N 46-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով.

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

*ԿՈՂՄ*

Վ.Հակոբյան ------------------ /ստ./
Ռ.Մովսիսյան ------------------ /ստ./
Թ.Սողոմոնյան ------------------ /ստ./
Ռ.Խլղաթյան ------------------ /ստ./
Գ. Համբարձումյան ------------------ /ստ./
Հ.Գալստյան ------------------ /ստ./

*ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*Կ. Տ.*

*2014թվական*
*Նոյեմբերի« 19»*
*գ. Մրգաշատ*

*ՀԱՎԵԼՎԱԾ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ
Նոյեմբերի 19-ի N 10 ՆԻՍՏԻ N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է
հիմնական օբյեկտների համար
1) Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 /տաս հազար/ դրամ.
2) Սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ:
բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 /քսանհինգ հազար/ դրամ;
գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000 /երեսուն հազար/ դրամ.
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
3) Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ;
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտներ վերակառուցման, ուժեղացման, վերանորոգման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով
1) Չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառակ նշանակության փոփոխություն 1000 /մեկ հազար/ դրամ:
2) Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վարականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, բացի սույն կետի <<1>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

3) Նախատեսված է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այդ կառույցների /այդ թվում ստորգետնյա շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը/:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /Երկու հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

1) Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ;

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

2) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը $24^{00}$ –ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

1) Առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ

2) Հանրայինսննդիևզվարճանքի օբյեկտներիհամար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ

3) Բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 /Երկու հարյուր հազար/ դրամ

4) Խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ

5) Շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /Երկու հարյուր հիսուն հազար/ դրամ

6) Վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տրամադրելու թույլտվության համար 1 քառ. մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ

2) Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ

3) Այլ արտադրանքի գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ

4) Դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեղնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ:
11. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000 /մեկ հազար/ դրամ:
12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 5000 /հինգ հազար/ դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

N 47-Ն

« 19» Նոյեմբեր 2014թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի պահանջներով

*Համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2015 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման տասներորդ օրը:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

*ԿՈՂՄ*

Վ.Հակոբյան ---------------- /ստ./
Ռ.Մովսիսյան ---------------- /ստ./
Թ.Սողոմոնյան ---------------- /ստ./
Ռ.Խլղաթյան ---------------- /ստ./
Գ. Համբարձումյան ---------------- /ստ./
Հ.Գալստյան ---------------- /ստ./

*ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*Կ. Տ.*

*2014թվական*
*Նոյեմբեր « 19»*
*գ. Մրգաշատ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ
*Նոյեմբերի 19-ի N 10 ՆԻՍՏԻ N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Երաժշտական դպրոց

   1) Նախադպրոցական դասարանի համար 2000/երկու հազար/դրամ

   2) 1-7-րդ դասարանների համար 3000/երեք հազար/դրամ

   3) 2 րդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ վարձավճար 1500/մեկ հազար հինգ հարյուր/ դրամ

2 Մանկապարտեզի ծնող գումարը մեկ ամսվա համար սահմանել 2000 / երկու հազար / դրամ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 19 » Նոյեմբեր 2014Թ.

N 48-Ն

### ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով.

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի 2015 թ-ի բյուջեն:
2. Համայնքի բյուջեի նախագիծը համապատասխանեցնել ներկայացված առաջարկներին
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝*

*ԿՈՂՄ*

Վ.Հակոբյան ---------------- /ստ./
Ռ.Մովսիսյան ---------------- /ստ./
Թ.Սողոմոնյան ---------------- /ստ./
Ռ.Խլղաթյան ---------------- /ստ./
Գ. Համբարձումյան ---------------- /ստ./
Հ.Գալստյան ---------------- /ստ./

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ*

*2014թվականի*
*Նոյեմբեր « 19»*
*գ. Մրգաշատ*

*Կ. Տ.*